

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Խ.ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԵԿՏՈՐ,
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ ՍԻՐՔՈՒԶԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ



ԿԱՐԾԻՔ

Խ.Արովյանի անվան ՀՊՄՀ

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

«08» դեկտեմբերի 2022թ.

ՀՄԵՑԻՆՆ՝ Միրանուշ Հովիկի Փարսադանյանի «Հովհաննես Միրզայան Վանանդեցու գրական ժառանգությունը» թեկնածուական ատենախոսության քննարկումը: Նիստին ներկա էին հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Դուրյանյանը, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Հովսեփյանը, մանկ.գիտ. թեկնածու, դոցենտներ (երկուսն էլ գրականության դասավանդման մեթոդիկայի գծով) Ռ.Դուրյանյանը, Գ.Մարդյանը:

Միրանուշ Փարսադանյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է հայ կլասիցիստական գրականության անվանի դեմքերից մեկի՝ Հովհաննես Միրզայան Վանանդեցու գրական ժառանգության վերլուծությանը, մեկնաբանմանը և գնահատմանը: Աշխատանքն անպայմանորեն արդիական է, որովհետև ցարդ հայ գրականագիտության մեջ գրված չէ հատուկ գիտական ուսումնասիրություն՝ նվիրված Հովհ.Վանանդեցու գրական ժառանգությանը: Ատենախոսն այս առումով լրացնում է լրջագույն բաց: Նկատենք նաև, որ ատենախոսը հիանալի է պատկերացնում հայ կլասիցիստական գրականության ընթացքը, որը ձևավորվեց ու զարգացում ստացավ Հայաստանից դուրս՝ Մխիթարյան հայրերի գրաբարագիր քերթվածներում: Ատենախոսությունը հաստատում է մի կարևոր փաստ: Գործելով Վենետիկում՝ Մխիթարյան հայրերը իրենց տեսադաշտում և ազդեցության ոլորտում պահում էին ողջ Մեծ Հայքը, նաև աշխարհասփյուռ հայությանը: Մրա պերճախոս վկայությունն է Հովհաննես Վանանդեցու ողջ ստեղծագործությունը, որը ստեղծված է Մխիթարյաններից հետո, սակայն նրանց հիմնադրած ավանդույթներով: Կա նաև երկրորդ կարևոր փաստը: Մխիթարյանները մեծ հայրենասերներ էին, և նրանց

կլասիցիստական գործերում հայրենիքի գաղափարն առանցքային դեր ունեւ: Բավական է հիշենք Արսեն Բագրատունու «Հայկ դյուցազն» ծավալուն երկը և «Բազմավէպում», հետագայում նաև «Հանդէս ամսօրեայում» տպագրված գրական ու թարգմանական նյութերը:

Միրանուշ Փարսաղանյանի ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից («Հայոց դարձի գեղարվեստական մարմնավորումը» /«Արփիական Հայաստանի»/, «Հայկական կլասիցիզմի պատմահայեցողության բանաստեղծական արտահայտությունը» /«Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ եւ Արայի», «Ոսկի դար Հայաստանի»/, «Հոգևոր-կրոնական գործերը» / «Ճան ներբողական ի Սուրբ Խաչն Քրիստոսի և պատմագրական առասացութիւն ի Սուրբ Նշանն Վարագայ», «Կերակուր քահանայից»/), եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Այս երեք գլուխներում ներկայացված է Հովհաննես Վանանդեցու անցած ողջ ստեղծագործական ուղին, ու որոշված է նրա տեղն ու դերը հայ կլասիցիստական գրականության մեջ:

Ճշգրտորեն է դիտարկված այն փաստը, որ Վանանդեցին ամեն հայի մեջ փորձում է սեր արթնացնել հայրենիքի փառավոր անցյալի նկատմամբ, միաժամանակ հակադրելով վերջինիս անփառունակ ներկան: Այս մի կարևոր ու հզոր միտում էր, որով Մխիթարյանները ներգործեցին XVIII դարի II կեսի և ողջ XIX դարի գրականության վրա: Չմոռանանք, որ պոլսահայ կոմպոզիտոր, հասարակական գործիչ Գաբրիել Երանյանը (1827-1862թթ.) Վանանդեցու «Առ Հայաստան» («Հայաստան, երկիր դրախտավայր») բանաստեղծությունը վերածել է մի ոգեշունչ հայրենասիրական երգի, որն առ այսօր ներգործում է լսողների վրա:

Կլասիցիստական հայ գրականության ուսումնասիրությունը գրականագիտության ոչ հեշտ բնագավառներից է լեզվի խրթին լինելու, ոճի ծանրաբեռնվածության, մտքի վերացականության պատճառով: Ատենախոսը կարողացել հաղթահարել այդ դժվարությունները և արդի հայերենով սահուն ձևով ներկայացրել իր մեկնաբանությունները:

Ատենախոսությունը շարադրված է պատմահամեմատական, գուգադրական մեթոդների հետևությամբ:

Ներածությունը ներկայացնում է հարցի պատմությունը, նաև համառոտ ձևով շարադրված է հեղինակի կենսագրությունը:

Առաջին գլխում («Հայոց դարձի գեղարվեստական մարմնավորումը») քննվում է 1829-ին գրված «Արփիական Հայաստան» ծավալուն պոեմը, որն ստեղծված է հատկապես Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» հիմքով:

Վանանդեցին քրիստոնեության պետական կրոն դառնալու պատմական իրադարձությանը ծանոթ է նաև Մովսես Խորենացուց և Միքայել Չամչյանցի «Հայոց պատմությունից»:

Որոշակիորեն պարզ է, որ այդ աղբյուրներին ծանոթ է ատենախոսը: Այս գլխում հատուկ քննության առարկա է դարձել Գրիգոր Լուսավորչի կերպարը, որը համաքրիստոնեական սուրբ է, նրա անունը մտած է աշխարհի հանրագիտարաններում, իսկ արձանը 2001-ից կանգնեցված է Վատիկանում:

Ատենախոսության երկրորդ գլուխը լիովին կապված է Հայաստանի V դարի պատմագրության հետ, և ուղենշային կերպարներ են հայերի նախահայր Հայկը, Հայկյան Արամը և Արա Գեղեցիկը: Ճիշտ է նկատված, որ այս նոր գործերում Վանանդեցին հետևելով պատմահայր Խորենացուն՝ իր ժամանակակիցներին փորձել է դաստիարակել նախնիների քաջագործությունների օրինակով: Իսկ «Ոսկի դար Հայաստանի» երկում ընկած են Մ.Չամչյանցի և Ղ.Ինճիճյանի աշխատությունները:

Ատենախոսության երրորդ գլխում մեկնաբանվում են Վանանդեցու կրոնական գործերը՝ հատկապես Վարագա խաչի պատմությունը, որն աչքի է ընկնում իր գրապատմական և ոչ թե գեղարվեստական արժեքով: Կրոնական բնույթի է նաև «Կերակուր քահանայից» գործը, որը 1760-ին հրատարակվել է Վենետիկում:

Միրանուշ Փարսադանյանի ատենախոսության եզրակացությունները բխում են հետազոտության բովանդակությունից: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության ասելիքին:

Միրանուշ Հովիկի Փարսադանյանի «Հովհաննես Միրզայան Վանանդեցու գրական ժառանգությունը» թեկնածուական ատենախոսությունը լիովին հաջողված է: Աշխատանքում կան մի շարք փոքր թերացումներ, որոնք կարելի է շտկել աշխատանքը տպագրության հանձնելու ժամանակ:

ա) Անհասկանալի է ատենախոսի կիրառած «կենսագրական մեթոդ» արտահայտությունը /էջ 11/. «...օգտվել ենք նաև գրական բնագրի վերլուծության կենսագրական... մեթոդների զինանոցից»: Կենսագրական մեթոդն անհասկանալի է:

բ) Տողատակի վրիպակներ. Խորագիրը չակերտների մեջ՝ էջ 34: Նույն աղբյուրի տեղի թվի մի քանի անգամ հիշատակում:

գ) Չափազանց մեծ տեղ է հատկացված աղբյուրների վերհանմանն ու քննությանը. նման դեպքում կարելի էր պարզապես ընդհանրացնել և ի մի բերել եզրակացությունները, այլ ոչ թե նույնաբնույթ միօրինակ ձևով իրար ետևից նույնառձ ձևով խոսել նմանաբնույթ երևույթների մասին՝ շարադրանքին հատկացնելով 58 էջ:

դ) Գովելի է, երբ ատենախոսը օգտագործել է ձեռագրեր, սակայն կան դեպքեր, երբ այդ ձեռագրերը կիրառելն ուղղակի պարտադիր չէ, երբ նկատում է, որ տպագիրը

ձեռագրից չի բխում: Մաշտոցյան Մատենադարանի 8902 ձեռագրի առնչությամբ երկար խոսում է ձեռագրի գրչական առանձնահատկությունների մասին՝ որպես յուրահատուկ մի բան: Սակայն հայտնի փաստ է, որ տարբերակիչ այն առանձնահատկությունները, որ նշում է ատենախոսը, ուղղակի սովորական երևույթներ են ուշ շրջանի ձեռագրերի մեջ, յուրահատուկ բան պարզապես չեն նշանակում և քննությանը որևէ բան չեն տալիս:

Նկատենք նաև, որ ատենախոսությունը որպես դասավանդման նյութ կարելի է հանձնարարել բանասիրական ֆակուլտետների ուսանողությանը՝ «Հայ կլասիցիզմի պատմություն» առարկան դասավանդելիս:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Սիրանուշ Հովիկի Փարսադանյանի «Հովհաննես Միրզայան Վանանդեցու գրական ժառանգությունը» թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Ժ.01.01- «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու պահանջներին, և նրա հեղինակն արժանի է ստանալու բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը: Որոշումն ընդունվել է միաձայն:

Քննարկման ժամանակ ելույթ են ունեցել հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Դուրյանյանը, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Հովսեփյանը, մանկ.գիտ. թեկնածու, դոցենտներ (երկուսն էլ գրականության դասավանդման մեթոդիկայի գծով) Ռ.Դուրյանյանը, Գ.Մարդյանը:

ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍ.ՄԵԹ.

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ, ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ,

ԲԱՆ.ԳԻՏ.ԴՈԿՏՈՐ,ՊՐՈՖԵՍՈՐ՝

Ա.Դուրյանյան ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Պրոֆ.Ա.Դուրյանյանի
ստորագրությունը հաստատում էմ

ԳԻՏ.ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ա.Դուրյանյան

ՄԱՐԻԱՍ ԻՍՊԻՐՅԱՆ